

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների կյանքի պայմանների ուսումնասիրության իրականացում, կարիքների գնահատում, ուղղորդում, երեխաների խնամքի ապահովում /մանկատուն, գիշերօթիկ հաստատություն/, նրանց ընտանիքների ուսումնասիրում, կարիքների գնահատում, երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրերի մշակում և իրականացման ապահովում:

- © Ուսումնասիրվել են թվով 480 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում:
- © Կատարվել են ավելի քան 50 տնայցեր երեխաներին մանկատուն, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն տեղավորելու նպատակով, որոնց արդյունքում որոշ երեխաներ տեղավորվել են հաստատություն: Մյուսների մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություն կանխարգելվել է ընտանիքին հասցեական աջակցություն, մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու, կամ ցերեկային խնամքի կենտրոն ուղղորդելու արդյունքում:

- ⊙ Իրականացվել են երեխայի հետ կապված հատուկ դեպքերի ուսումնասիրում և երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովում:
- ⊙ Կարգավորվել են ամուսնալուծվող ընտանիքների երեխաների՝ ծնողներից մեկի կամ մյուսի մոտ խնամքի և տեսակցության հարցեր /փոխհամաձայնությամբ/, ընտանիքի վերամիավորմանն ու ամրապնդմանը ուղղված խորհրդատվություններ:
- ⊙ Իրականացվել են դատարան եզրակացություն ներկայացնելու կամ միջդատական վարույթում խորհրդատվական բնույթի աշխատանքներ: Երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու /սանիտարահիգիենիկ վատթար պայմաններ, ջեռուցման բացակայություն և այլն/ դեպքում, բռնության ենթարկված քաղաքացիների պաշտպանության համար բաժինը համայնքի և այլ պատկան մարմինների հետ համատեղ կատարել է ուսումնասիրություն, կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ /վերականգնողական, խնամքի տրամադրման, կրթական, բժշկական աջակցության տրամադրման և այլ/:
- ⊙ Բաժնի մասնագետները մասնակցություն են ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և դատական նիստերի , ներկայացրել ենք ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցեր:

Խնամքի շուրջօրյա հաստատություններ տեղավորում, դուրսգրում, կանխարգելում

2017թ-ին 14 երեխա տեղավորվել է մանկատուն որից՝

- Վանաձորի մանկատուն են տեղավորվել առանց ծնողական խնամքի մնացած և կյանքի և առողջության համար անբարենպաստ պայմաններում գտնվող թվով 11 երեխա:
- 3 երեխայի տրվել է եզրակացություն մասնագիտացված մանկատուն տեղավորելու համար :

Մանկատնից դուրս է գրվել 2 երեխա, որց 1-ը վերադարձել է կենսաբանական ընտանիք, 1-ը հանձնվել է խնամատար ընտանիք:

01.01.2018թ. դրությամբ մանկատանը բնակվում է 61 երեխա :

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն է **ընդունվել 3 երեխա :**

Հաշվի առնելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների ներկայիս ընթացքը, 2017 թ-ին առավել ծավալուն աշխատանք է տարվել երեխաների գիշերային խնամք իրականացնող հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ուղղությամբ և խորհրդատվությունների, ուղղորդումների, բազմամասնագիտական խորհրդակցությունների շնորհիվ ունեցել ենք տեսանելի արդյունք: Բացի այդ 24 երեխայի մուտքը հաստատություններ կանխվել է Առավոտ ԲՀԿ-ի միջոցով իրականացվող կանխարգելման ծրագրի շրջանակներում ընտանիքներին փաթեթային աջակցություններ տրամադրելու արդյունքում:

- Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունից **դուրս են գրվել 54 երեխա**, որից 10 երեխա ընդգրկվել է բեռնաթափման ծրագրի մեջ, ընտանիքն ստանում է աջակցություն սննդի և կոմունալ ծախսերի մասնակի փոխհատուցման տեսքով և որոշակի ուղեկցող մասնագիտական աջակցություն:

08.01.2018թ. դրությամբ խնամքի կենտրոնում խնամվում է 56 երեխա:

Ներկայումս սկսվել է այս երեխաների ընտանիքների հետ վերամիավորվելու /դուրսգրումների/ գործընթացը, որի համար կատարվել են կարիքների վերազնահատումներ և ըստ յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի կարիքի, կազմակերպվում են ընտանիքների հետ մասնագիտական աշխատանքները , ցերեկային խնամքի հաստատություններ ուղղորդումներ, 4 միջազգային կազմակերպությունների /UNICEF, COAF, SOAR, DIAKONIA/ և Առավոտ ԲՀԿ-ի հետ համագործակցությամբ հասցեական աջկցությունների տրամադրում /տարբեր բնույթի խնդիրներ լուծելու համար/ :

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼ ԵՆ

3 տարվա համեմատական

	2015	2016	2017
Առանց ծնողական խնամքի մնացած երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ	21	30	26
Որդեգրել ցանկացող անձ	17	21	13
Որդեգրման ենթակա երեխա	18	8	10

Խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն տեղավորված երեխա	28	24	3
Մանկատուն տեղավորված երեխա	18	23	11
<i>Ընդամենը</i>	102	106	<i>63</i>

3 երեխա որդեգրվել է, որից 2-ը հարազատի կողմից

**Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավոմատացված
տեղեկատվական համակարգի վարում**

2017թ-ի ընթացքում «Նորք» ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ՝ դրանում հաշվառելով.

ա) 26 առանց ծնողական խնամքի մնացած երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ և օրենքով սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կենտրոնացված հաշվառման,

բ) 13 որդեգրել ցանկացող անձ, ով բաժնի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա հաշվառվել է որպես որդեգրողի թեկնածու/ տվյալները գրանցվել են հաշվառման մատյանում, լրացվել է որդեգրողի

թեկնածուի անձնական քարտը և, պատճենը փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/

գ) 10 որդեգրման ենթակա երեխաներ, ում տվյալները եւ անձնական քարտերի պատճենները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

դ) խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություն տեղավորված 3 երեխաներ

ե) մանկատուն տեղավորված 11 երեխաներ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԳ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-ների հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացնվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական /հատուկ հանրակրթական/ ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 54 երեխա. Ամփոփ պատկերն է՝

Բաժին	Ընդհանուր թիվ	Հանցանք կատարած	Չանցանք կատարած	Մուրացիկ	Թափառաշրջիկ	Պարտուաից դուրս մնացած	Տղա	Աղջիկ	Երեխայի վրա բացասական ներգործություն ունեցող ծնող
Տարոն	21	4	17	-	-	1	16	5	-
Բազում	13	8	5	-	-	-	11	2	3

Գուգարք	8	7	1	-	-	-	5	3	-
Սպիտակ	7	4	3	-	-	-	7	-	-
Տաշիր	-	-	-	-	-	-	-	-	-
Ստեփանավան	4	-	4	-	-	-	4	-	1
Թումանյան	1	-	1	-	-	1	1	-	-
Ընդամենը 2015թ.	42	16	22	1	5	3	4	8	4
Ընդամենը 2016թ.	53	28	21	3	-	4	46	7	7
Ընդամենը 2017թ.	54	23	31	-	-	2	44	10	4

Պրոբացիոն ծառայության գրասենյակ 2017թ.-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանից ուղղորդվել են 2 անչափահաս: Նրանց հետ տարվող աշխատանքները դեռևս կրում են պասիվ բնույթ. յուրաքանչյուր ամիսը երկու անգամ անչափահասը ներկայանում է բաժին, իսկ ամիսը մեկ անգամ բաժնի ծառայողը այցելում է բնակության վայր, հանդիպում է ծնողի հետ, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն: Համապատասխան մասնագետների համալրումից հետո ծառայությունը կդառնա ավելի արդյունավետ և հուսով ենք անչափահասները տարված աշխատանքներից հետո կփոխեն իրենց վարքն ու հետաքրքրությունները:

Ներառական կրթություն կազմակերպում մարզի դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների վկայագրում

Ընդհանուր ներառական դպրոցներում – 696 երեխա

Տնային ուսուցում կազմակերպվում է 25 երեխայի հետ

2017 թ. դեկտեմբերի 29- ի դրությամբ մարզում ունեցել ենք 721 վկայագրված առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա

Տարածաշրջան	ներառական կրթություն կազմակերպող դպրոցների քանակ	վկայագրված երեխաների թիվ
Վանաձոր	13 դպրոց	292
Գուգարք	3 դպրոց	12
Ստեփանավան	12 դպրոց	201
Ալավերդի	10 դպրոց	123
Սպիտակ	15 դպրոց	68

Մարզում ունենք 53 դպրոց, որտեղ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ

2017-2018 ՈՒՍՏԱՐԻ

Վանաձոր քաղաք	12 աշակերտ
Գուգարքի տարածաշրջան	14 աշակերտ
Ալավերդու տարածաշրջան	10 աշակերտ
Սպիտակի տարածաշրջան	10 աշակերտ
Ստեփանավանի տարածաշրջան	10 աշակերտ

Ընդամենը՝ **56** երեխա

ՌԴ-ում գտնվում են՝ **13**

6տ երեխաներ՝ **32**

Խուսափում են կրթությունից՝ **10**

Հաշմանդամություն ունեցող՝ **1**

ԱՇԽԱՏԱՆՔ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Մարզի խնամատար ընտանիքներում ներկայումս խնամվում են 4 երեխաներ, որոնցից 3-ը Վանաձորում, 1-ը Մարգահովիտ համայնքում:

Երեխաներից 2-ը քույրեր են և նույն խնամատար ընտանիքում են, /Լոռու մարզետի կողմից 2017թ.-ին նրանց արվել է այցելություն/ նկարը

Բաժնի կողմից տարվա ընթացքում նշված ընտանիքները մշտապես ստացել են խորհրդատվություն, եղել են հանդիպումներ երեխա-խնամատար ծնող- կենսաբանական ծնող –բաժնի մասնագետներ խմբով, հարթվել են ծագած տարաձայնությունները, վերականգնվել է վստահությունը ընտանիքի անդամների և կենսաբանական ծնողի միջև:

2017 թ-ը աննախադեպ էր խնամատար ընտանիք դաստիարակության համար երեխա վերցնել ցանկացող անձանց դիմելիության աճի առումով: Սա ուղղակիորեն բխում է երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021թթ ռազմավարությանից և պետության այս ոլորտում ներկայումս որդեգրած քաղաքականությունից: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար խնամք ապահովելու լավագույն մոդելներից մեկը համարվելով, խնամատար ընտանիքն արդյունավետ այլընտրանք է երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններն: Միջազգային կազմակերպությունների կողմից նախորդ տարի կատարված <ծախս-օգուտ> հետազոտությունները ևս փաստել են, որ անհամեմատ քիչ ծախսով խնամատար ընտանիքում կարելի է խնամել և դաստիարակել ընտանեկան մոդելով, անհատական զարգացման հնարավորություններով անձ:

Տարվա ընթացքում 22 անձ հաշվառվել է որպես խնամատար ծնողի թեկնածու, որից.

Վանաձորից 8, Օձուն համայնքից 6, Բազումից 2 և Գուգարք, Շիրակամուտ, Ստեփանավան, Լեռնահովիտ, Հաղպատ, Չկալով համայնքներում մեկական թեկնածու:

Ֆինանսավորման վերաբերյալ որոշումը լինելուն պես կսկսվեն Վանաձորի մանկատան երեխաներին համապատասխան այս ընտանիքների ընտրությունը , շփման ուղեկցումը, որոշումների և պայմանագրերի կազմումը:

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

h/h	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսական ապահովումը
1.	Կազմակերպվել է մշտադիտարկում մարզի հասարակության կյանքի առանցքային ոլորտներում գենդերային հավասարության առաջնության, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության վերաբերյալ	Վերլուծվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքին կանանց մասնակցության հետ կապված իրավիճակը, մշակվել են երաշխավորություններ, որոնք նպաստել են որոշումների կայացման մարզային բոլոր մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովմանը:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

2	Կազմակերպվել են գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված հանդիպում-քննարկումներ մարզում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության նպատակով	Խորացվել է սոցիալական գործընկերությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև՝ գենդերային խտրականության հաղթահարման, գենդերային հավասարության առաջնության և երկրում ժողովրդավարության խորացման համար:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
3.	Մարզի համայնքներում /ընտրությամբ/ իրականացվել է ընտանեկան խնդիրների մշտադիտարկում	Բացահայտվել են ընտանիքներում կանանց և տղամարդկանց ներդաշնակ հարաբերություններին առնչվող խնդիրներ, մշակվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
4.	Կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ մարզի 9 համայնքներում «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում	Բարձրացվել է 9 համայնքների 480 բնակիչների իրազեկվածության մակարդակը պտղի սեռի խտրական ընտրության հիմնախնդրի շուրջ:	Լոռու մարզետարան, «Առավոտ» ԲՀԿ, համայնքապետարաններ, դրամաշնորհային ծրագիր

5.	Կազմակերպվել են մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ	Վանաձորում կազմակերպվել են 2-օրյա իրազեկման հանդիպումներ գյուղական համայնքների 23 կին ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում բարձրացել է տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մոտ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման մակարդակը, ինչպես նաև նրանց գենդերային զգայնությունը: ներկայումս մարզում ունենք ավագանու 12 կին անդամներ	Լոռու մարզետարան, դրամաշնորհային ծրագրեր
6.	Կազմակերպվել են «Ընտրական օրենսգրքի փոփոխությունները որպես որոշումների կայացման մակարդակներում կանանց անհրաժեշտ ներկայացվածության ապահովմանը նպաստող գործոն» կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ տարածաշրջանային կենտրոններում	Մշակվել է առաջարկությունների փաթեթ ընտրական օրենսգրքի փոփոխությունների համատեքստում՝ որոշումների կայացման բոլոր մակարդակներում կանանց ներկայացվածության բարձրացման համար:	Դրամաշնորհային ծրագրեր

7.	Իրականացվել է «Ընտանեկան բռնության դեմ պայքարում ոստիկանության համագործակցության կարողությունների զարգացում» ծրագիրը	բարձրացել է ոստիկանության անչափահասների բաժինների մասնագետների և երեխաների խնամք իրականացնող հաստատությունների մասնագետների իրազեկվածության մակարդակը ընտանեկան բռնության խնդրի շուրջ և, խնդիրների ուղղորդման և համագործակցության մեջ գրանցվել է որակական և քանակական աճ	ԵԱՀԿ, <Սոցիալական արդարություն> ՀԿ, Լոռու մարզպետարան
----	--	--	---

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Վանաձորում գործող ցերեկային կենտրոնների հետ բաժինը սերտորեն համագործակցում է, ունենում ենք դեպքերի համատեղ քննարկումներ, դժվար իրավիճակում հայտնված և կենտրոնների ռեսուրսներից լայն միջամտության անհրաժեշտության դեպքում աջակցություն, ուղղորդում, այլ կառույցների ու կազմակերպությունների ներգրավում:

Առավոտ կազմակերպությունը 2017 թ-ի 2-րդ կեսից սկսեց իրականացնել ցերեկային խնամք, դեռևս մուտքի- ելքի շարժ չունենք, ներկայումս կենտրոնը կամավորականների աշխատանքով իրականացնում է կրթական մասը և կենտրոն հաճախում է 40 երեխա:

Հ/Հ	Ցերեկային կենտրոն	Մուտք	Ելք	Ներկա	2016 թ
1	Փոքրիկ Իշխան / Վանաձոր/	69	39	87	75
2	Փոքրիկ Իշխան /Տաշիր/	17	10	33	36
3	Շող	16	18	61	71
4	Օրբան	72	42	114	103

**ԾՐԱԳՐԵՐ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ և ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆԸ**

- Հաշվի առնելով շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմակերպմանն ուղեկցող դժվարությունները, ընտանիքներին ուժեղացնելու և երեխաների դասապատրաստումների, զբաղվածության

հարցերում օժանդակության կարիքը, միաժամանակ դեպք վարողների ունեցած հնարավորությունների սղությունը, տեղեկացվածության պակասը մարզում ունեցած ռեսուրսների մասին՝ տարեվերջին բաժնի կողմից կազմակերպվեց հանդիպում Վանաձորի ՍԱՏԲ-ի դեպք վարողներին աջակցելու նպատակով: Համայնքում առկա ցերեկային խնամքի կենտրոնները, ընտանիքներին աջակցություն տրամադրելու կարողություններ ունեցող կազմակերպությունները դեպք վարողներին ներկայացրեցին իրենց գործառույթները և ունեցած ծառայությունները, ինչպես նաև 2018թ.-ին սպասվող ծրագրերը: Հանդիպման ֆորմատը մասնակիցների կողմից արժանացավ հավանության, ինչը մոտիվացրեց նման օրինակով հանդիպումներ անցկացնել նաև մարզի մյուս տարածաշրջաններում:

- Տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ գիշերային խնամք իրականացնող հաստատությունների վերակազմակերպման և երեխաներին ընտանիք վերադարձնելու համար նրանց կարիքներն ու վերադարձի ռիսկերը գնահատելու համար: Դրանցում ներգրավված են եղել ՍԱՏԳ-ների դեպք վարողները, խնամքի հաստատությունների մասնագետներ, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԱՍՀ նախարարության մասնագետներ:

Կատարվել է ուսումնասիրություն մարզում շուրջօրյա խնամքի հաստատությունների և հատուկ դպրոցների երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման արդյունքում առաջացող կարիքների ու ռիսկերի շուրջ, վերհանվել են այն աջակցության տեսակներն ու ծառայությունները, որոնք կնպաստեն երեխաների վերադարձին ընտանիք և որոշ ժամանակ կուղեկցեն վերամիավորումից հետո: Ներկայումս ունենք Վանաձորի խնամքի կենտրոնի երեխաների ընտանիքների հետ վերամիավորման ծրագիր, որում ընդգրկված են յուրաքանչյուր ընտանիքին հասցեական աջակցության տեսակները և միջազգային UNICEF, DIAKONIA, SOAR, COAF կազմակերպությունները ներդրում են ունենալու այս ընտանիքների տնտեսական վերականգնման և խոցելիության նվազման աշխատանքներում:

- Ուսումնասիրության արդյունքում համապատասխան գերատեսչություններին ներկայացվել են առաջարկություններ նշված հաստատություններից երեխաների դուրսգրման հետևանքով տնտեսված միջոցների հաշվին Վանաձոր, Սպիտակ և Ալավերդի քաղաքներում ստեղծել ընտանիքի աջակցման կենտրոններ և Վանաձորում բռնության զոհերի աջակցման կենտրոն, ինչը նաև հնարավորություն կտա

վերակազմակերպվող հաստատությունների մասնագիտական ներուժը օգտագործելով և նոր նեղ-մասնագիտական ծառայություններ ներդնելով ունենալ ոչ միայն ներկայումս վերամիավորվող ընտանիքներին, այլ նաև մարզում դժվարին /արտակարգ/ վիճակներում հայտնվող ընտանիքներին տրամադրվող ծառայություններ:

- Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջանի հետ համագործակցությամբ «Ձեռք մեկնիր եղբորդ» բարեգործական ծրագրի շրջանակներում մարզի 9 անապահով ընտանիքներ ստացել են բնակարաններ՝ Վանաձոր, Ալավերդի, Օձուն, Կուրթան , Լեջան, Վարդաբլուր և Շահումյան համայնքներում:
- .«Առավոտ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է ուսումնասիրություն և բեռնաթափման ծրագրի շրջանակներում ընտանիք են վերադարձել Վանաձորի և Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցների 5-ական երեխաներ:
- Ուսումնասիրվել են մարզի ԽՀՀ-ների գործունեությունը, կատարվել է խորհրդատվություն, տրամադրվել է մեթոդական աջակցություն ԽՀՀ-ների աշխատանքների վերաբերյալ:
- Կազմակերպվել են հանդիպումներ ԽՀՄ-ների ներկայացուցիչների հետ, որտեղ կատարվել են իրազեկման աշխատանքներ օրենսդրական դաշտի վերաբերյալ, տրամադրվել են նյութեր, աշխատանքների բարելավման նպատակով իրականացվել է մոնիտորինգ, դեպքերի համատեղ քննարկումներ, արդյունքում տրվել են աշխատանքային ցուցումներ:
- Բաժնում կատարվել է մոտ 3500 քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում տրվել են համապատասխան ցուցումներ և խորհրդատվություններ սոցիալ- հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական հարցերի շուրջ:
- Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին աջակցություն տրամադրող «Դիակոնիա» կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացրել են հումանիտար օգնության ծրագրեր ' սննդի, հագուստի, գրենական պարագաների տեսքով: Թվով 1225 շահառուներ օգտվել են ծրագրից:

Մնունդ	Գրենական պիտույքներ և պայուսակ	Ձմեռային տաք կոշիկ և հագուստ
1000	100	125

- ԱՍՄ բարեգործական մարդասիրական հիմնադրամի կողմից տրամադրվել է օգնություն / հագուստ և ավստրալիացի տատիկների ձեռքով գործված ծածկոցներ/ մոտ 100 ընտանիքների, որից 15-ը Սպիտակի խնամքի տան բնակիչներին:
- Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության հետ համագործակցությամբ 61 ընտանիքի տրամադրվել է գրենական պիտույքներ, պայուսակ և հիգիենայի պարագաներ:
- «Save the children» կազմակերպության հետ համատեղ իրականացվել են պտղի սեռով պայամանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված հանդիպումներ մարզում երեխաների իրավունքների պաշտպանության ցանցի մասնագետների, երեխաների հետ աշխատող կառույցների մոտ 40 մասնագետների հետ, որոնց մի մասն իրենց իսկ նախաձեռնությամբ իրենց դպրոցներում և մանկապարտեզներում ծնողական հանդիպումներ են կազմակերպել և ստացած գիտելիքները փոխանցել են ծնողներին:
- ▶ Կազմակերպվել են դեպքերի քննարկումներ, համատեղ տնայցեր, երեխաների և ընտանիքների կարիքների գնահատում և համապատասխան աջակցություն որոշ դեպքերում խորհրդատվական, կամ ծառայությունների մատուցման կամ էլ նյութական-հումանիտար օգնության տեսքով:
- ▶ Մարզում գործող ցերեկային խնամք իրականացնող կազմակերպությունների հետ տարվա ընթացքում ունեցել ենք սերտ համագործակցություն: Վանաձորի «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոնի, Հայկական Կարիտաս բարեսիրական կազմակերպության Վանաձորի եւ Տաշիրի «Փոքրիկ իշխան» կենտրոնների և «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ բաժինը պարբերաբար կատարել է շահառու կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների հետ տարվող աշխատանքների և դեպքերի քննարկում, որի արդյունքում կանխարգելվել է մեծ թվով երեխաների մուտքը հաստատություններ: Առանձին դեպքերում իրականացվել են համատեղ տնայցեր, մասնագիտական խորհրդատվություն և թեմատիկ քննարկումներ: Այն ընտանիքների հարցերով, որտեղ

առկա են եղել բարդ կամ կազմակերպության ռեսուրսներից լայն խնդիրներ, բաժնի միջամտությամբ կազմակերպվել են ընդլայնված քննարկումներ՝ հարցերին առավել ամբողջական լուծում տալու նպատակով: Որոշ ծնողների հետ կազմակերպության առաջարկությամբ տարվել են սոցիալ-հոգեբանական և ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

- ▶ 2017թ.-ին հետաքրքիր նախաձեռնությամբ հանդես եկանք Ընտանիքի օրվան նվիրված միջոցառումներ ունենալու շուրջ: Երկու ցերեկային կենտրոն արձագանքեցին և յուրահատուկ մրցույթ- վիկտորինաներ ունեցանք՝ սկզբում <Շող>, ապա <Փոքրիկ իշխան> կենտրոնների ընտանիքների միջև: Սրա նպատակն էր սոցիալապես անապահով ընտանիքներին ցույց տալ, որ ընտանիքի անդամները համագործակցելով, միմյանց վստահելով ու խրախուսելով կարող են անել անհնարինը և որ միասին իրենք ուժեղ են: